ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 191 – Ա

21 մարտի 2019 թ.

«ԿԱՐՃԱՂԲՅՈՒՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԻ ՄՐՑՈՒՅԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի ու 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 7-ի N 992-Ն որոշմամբ հաստատված «Առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի օրինակելի կարգի» 8-րդ կետը և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2011 թվականի սեպտեմբերի 15-ի N 197-Ն որոշմամբ հաստատված «Առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի կարգի» 6-րդ և 7-րդ կետերը

որոշում եմ՝

1. Հաստատել 2019 թվականի մարտի 22-ին, ժամը 10^{30}-ին Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Կարճաղբյուրի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթ անցկացնող մրցույթային հանձնաժողովի կազմը՝ Բիձյան Հակոբջան (մարզպետարանի քաղաքաշինության վարչության բնակարանային և ենթակառուցվածքների գործունեության բաժնի վարիչ), Խաչատրյան Գևորգ (մարզպետարանի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի վարիչ), Կարապետյան Սուրեն (մարզպետարանի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի վարիչ), Սաֆարյան

Համբարձում (մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի վարիչ), Պետրոսյան Մարտին (մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի վարիչ), Շահբազյան Հասմիկ (մարզպետարանի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի վարիչ), Գասպարյան Հերմինե (Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի կադրերի և անձնակազմի կառավարման վարչության գլխավոր մասնագետ):

2. Մրցութային հանձնաժողովի նախագահ նշանակել Հակոբջան Բիձյանին, քարտուղար՝ Հասմիկ Շահբազյանին:

3. Հանձնաժողովի լիազորությունները համարվում են դադարեցված մրցույթի ավարտից հետո:

21.03.2019

ՍԱՆՈՍՅԱՆ

ՍԱՆՈՍՅԱՆ Գ.Ս. SANOSYAN GNEL 1710830069

Գ. ՍԱՆՈՍՅԱՆ